

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի

13/09/2010թ թիվ 10-Լ որոշմամբ

Փոփոխված է 27/02/2014թ թիվ 5-Լ որոշմամբ

23/06/2015թ թիվ 67-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»

ԻԱՄ խորհրդի նախագահ

----- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը գրանցված է)

ՀՀ կենտրոնական բանկում

«29» հուլիսի 2015թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Զավադյան

## ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-007

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ և  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ)

ԵՐԵՎԱՆ - 2015

## ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) կողմից Ապահովադրից (Ապահովադրի լիազորված անձից) պահանջվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

1) *Ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում՝* Ապահովադրի կապի միջոցները, վարորդական ստաժի վերաբերյալ տեղեկատվություն և ստորև ներկայացված փաստաթղթերի պատճենները՝

ա. անձնագիր կամ նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,

բ. եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք,

գ. վարորդական վկայականը (առկայության դեպքում), (Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները),

2) *իրավաբանական անձ Ապահովադրի դեպքում՝* Ապահովադրի պետական գրանցման վկայականը, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև վերջինիս բնօրինակը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվի տվյալները և կապի միջոցները,

3) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝* Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,

4) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում օտարերկրյա պետությունը՝* օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,

5) *այն դեպքում, երբ Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության համայնքը՝* համայնքի անվանման, համայնքի անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ,

6) լիազորված տիրապետողների վերաբերյալ սույն կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները՝ կախված նրա բնույթից,

7) Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի կամ այլ համարժեք փաստաթղթի կամ մաքսային հայտարարագրի, եթե ավտոտրանսպորտային միջոցն ունի մեկից ավելի համարանիշեր՝ ապա նաև այդ համարանիշերն արտացոլող փաստաթղթի պատճենները, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները,

8) «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթերի (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, առուվաճառքի պայմանագիր, լիզինգի պայմանագիր, լիազորագիր և այլն) պատճենները, իսկ Ապահովագրողի գրավոր կամ բանավոր պահանջով՝ նաև դրանց բնօրինակները,

8.1) Ապահովադրի կողմից կամ նրա անունից հատուկ այդ նպատակով լիազորված անձի կողմից տրված գրավոր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը կարող է օգտագործել պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերում պարունակվող տվյալները այդ փաստաթղթերում կամ ԱՊՊԱ պայմանագրում արտացոլված տեղեկությունների ստուգման՝ ներառյալ պետական կամ ոչ պետական մարմիններին ու կազմակերպություններին համապատասխան հարցումներ կատարելու նպատակով: ***(1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը փոփոխվել և 8.1-րդ ենթակետը լրացվել են 23/06/2015թ թիվ 67-L որոշմամբ)***

9) ԱՊՊԱ վկայագրի դաշտերը լրացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ,

2. Ապահովագրողին (ներառյալ իր լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի միջոցով) արգելվում է ԱՊՊԱ պայմանագրի կնքելու համար Ապահովադրից (Ապահովադրի լիազորված անձից) պահանջել սույն կանոններով չնախատեսված տեղեկություններ կամ փաստաթղթեր կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) ներկայացումը համարել ԱՊՊԱ պայմանագրի կնքման նախապայման կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) չներկայացման հիմնավորմամբ ԱՊՊԱ պայմանագիրը կնքել Ապահովադրի (Ապահովադրի լիազորված անձի) վիճակը վատթարացնող պայմաններով: